

Բարի օր, պարոն Օբերմայեր:

Ձեր առաջին LinkedIn հաղորդագրությունից հետո մի քանի անգամ հետապնդվելուց հետո, որում դուք հստակ նշում եք, որ ստացել եք «արժանահավատ» տեղեկատվություն բազմամիլիոն բանկային հաշիվ(ների) վերաբերյալ, որոնք ակնհայտորեն ստեղծվել, կառավարվել և/կամ օգտագործվել են իմ կողմից (իմ անունով), ես վերջապես փորձում եմ օգնել ձեզ հասկանալ փաստերը իմ անձի և իրավիճակի վերաբերյալ:

Մինչև 2010թ. ես երբեք չեմ եղել Շվեյցարիայում, առաջին անգամ այցելել եմ Շվեյցարիա որպես ՎիվաՍել-ՄՍՍ-ի աշխատակից՝ մասնակցելու ռոումինգի վերապատրաստման մեկշաբաթյա դասընթացի, որը կազմակերպել էր մեր մատակարար Comfone AG-ն, Բեռնում: Երկրորդ անգամ Շվեյցարիա մեկնեցի 2012 թվականին՝ որպես իմ գործատու Vivacell-MTS-ի պատվիրակ՝ Բեռնում կայանալիք Comfone AG հաճախորդների միջազգային համաժողովին մասնակցելու համար: Երրորդ անգամ Շվեյցարիա եկա 2014 թվականի օգոստոսին, երբ հեռացա հայ գործատուից: Ես աշխատանք ստացա իմ նախորդ գործատուի մատակարար Comfone AG-ում և մինչ այժմ աշխատում եմ այդտեղ:

Credit Suisse-ում բանկային հաշիվը ես բացել եմ 2014 թվականի օգոստոսի վերջին: Ինձ բարձր են գնահատում թիմի անդամները և Comfone-ի ղեկավարությունը, և իմ անունը միշտ եղել է Comfone-ի կայքում, այսինքն՝ երբեք չի անհետացել կայքից, ուղղակի նրանք երբեմն փոխում են կայքի կառուցվածքը: Իհարկե, իմ անունը դեռ կայքում է: Ինչ վերաբերում է «1997 թվականին իմ անունով Credit Suisse-ում բացված հաշվեհամարին», ես կարող եմ պարզապես ասել, որ սա ինձ համար ապշեցուցիչ է և բացարձակապես կեղծ: Յիշեք, երբ ես բացեցի իմ առաջին Credit Suisse հաշիվը՝ իմ անունով, ծննդյան ամսաթվով, շվեյցարական թուղթով և այլն 2014թ. օգոստոսին, այս նույն բանկը կտեսներ, որ կա ևս մեկ (բազմամիլիոն!?) հաշիվ՝ կապված իմ անվան հետ: Բայց իմ անունով այլ հաշիվ չկա, կամ, ամեն դեպքում, ես տեղեկություններ չունեմ նման հաշվի, ոչ էլ որևէ հաշվետվության կամ ձեռ նշած որևէ այլ բանի հետ կապված:

Վերջապես, թեև ես գիտեմ, որ պարոն Տիգրան Չաքարյանը (քեռիս) վաղուց ընկերություն է ունեցել, իմ անունը կապ չունի նման ընկերության գրանցման հետ (որն արդեն երկար տարիներ գոյություն չունի): Ձեր հիշատակած (Անդրանիկ Մանուկյանի) ընտանիքի հետ ես երբեք որևէ առնչություն կամ գործ չեմ ունեցել, անձնական կամ փողային առումով: Ինչ տեղեկություն էլ որ ունեք՝ կապված իմ անվան և բազմամիլիոն բանկային հաշվի հետ, սխալ է, և ես կարող եմ միայն ասել, որ իմ «հարստությունը» նորմալ աշխատողի հարստություն է, որը թույլ է տալիս ողջամիտ միջին ապրելակերպ՝ հիմնված ամսական աշխատավարձի վրա:

Ամփոփելով՝ խնդրում եմ բարի եղեք և տրամադրեք ինձ ձեր ստացած տեղեկատվության աղբյուրը/ապացույցները, որոնք կեղծ են, այսինքն՝ ենթադրյալ բազմամիլիոն CHF դրամական միջոցների ամբողջական բանկային քաղվածքները կամ հաշվետվությունները, որոնք կարծես թե «թափանցիկ կերպով (?)» նշում են բացման և փակման մնացորդները և շրջանառությունը, որի մասին ես չգիտեմ (այսինքն՝ «106 միլիոն CHF կարողությունը», «24 միլիոն CHF» ծախսերը վերջին 3 տարվա ընթացքում և այլն): Բացի այդ, ես շահագրգռված չեմ ձեր հետաքննության այլ՝ 3-րդ կողմերի բանկային/մասնավոր ֆինանսական տեղեկատվություն ստանալու հարցում: Չուտ

բանկային քաղվածք(ներ), թափանցիկ հաշվետվություններ կամ այլ պաշտոնապես փաստաթղթավորված տեղեկություններ, որոնք հստակորեն կապված են միայն իմ անվան հետ, եթե դրանք ընդհանրապես կան:

Այնուամենայնիվ, այս ամենն ինձ համար մղձավանջ է, և ես ևս մեկ անգամ կրկնում եմ, որ ես ԵՐԲԵՔ նման հսկայական գումարներ չեմ ունեցել կամ օգտագործել (նախկինում կամ ներկայում), և ձեր տեղեկությունները 100% կեղծ են՝ կապված իմ անվան և անձի հետ: Ելնելով դրանից՝ խնդրում եմ դադարեցնել Հայաստանում իմ և իմ ընտանիքի, քեռուս, հարևաններիս (ձեր գործընկեր hetq.am-ի միջոցով) հանդեպ հետագա ոտնձգությունները, ինչը եղել է վերջին մի քանի ամիսների ընթացքում: Այս իրավիճակը բացարձակապես անընդունելի է, և ես ապավինում եմ ձեր ըմբռնմանը, շնորհակալություն», -գրել է Մինասյանը:

Հարգանքով:

Նինա Մինասյան,

Ապրիլի 9, 2022